ԵՊՀ Օլիմպիադա – 2025 թ.
Հայոց պատմություն
Թեստ (17,5 միավոր)

1. Ո՞վ է Արտաշեսին անվանել «Արմենիայի մեծագույն մասի տիրակալ». 0,25 մ.
2. Որքա՞ն էր Ռուսայի ջրանցքի երկարությունը. 0,25 մ.
3. Ո՞վ բռնազավթեց հայոց գահը 51 թ.: 0,25 մ.
4. Ո՞ր բլրի վրա էր տարածվում Վարդգեսավան գյուղաքաղաքը: 0,25 մ.
5. Ո՞ւմ դեմ պայքարելու համար Նիգերը օգնություն խնդրեց Վաղարշ II-ից: 0,25 մ.
6. Որքա՞ն էր Նեմրութ լեռան սրբավայրում Արամազդի արձանի բարձրությունը. 0,25 մ.
7. Քանի՞ տառերից էր բաղկացած արամեական այբուբենը: 0,25 մ.
8. Ո՞ր թվականներին է կաթողիկոս եղել Վրթանես Ա Պարթևը: 0,25 մ.
9. Ո՞վ է գրել Պամփյուլիայում բռնված հովազի մասին, որի ոսկյա մանյակի վրա հայերեն տառերով գրված էր. «Արշակ թագավոր՝ Նյուսիա աստծուն»: 0,25 մ.
10. Ե՞րբ է կազմվել Երևանի առաջին գլխավոր հատակագիծը: 0,25 մ.
11. Որքա՞ն հայ էր բնակվում Զմյուռնիայում XIX դ. սկզբում: 0,25 մ.
12. Հովհաննես Քարմատանենց երեցի ջանքերով 1616 թ. որտե՞ղ հիմնվեց տպարան: 0,25 մ.
13. Ո՞ր պատմիչն է գրել հետևյալ տողերը. «...Այնժամ Լուկուլոսը, քանզի շատերը վիրավորվել էին, և մի մասն էլ մահանում էր, իսկ հաշմվածները հեծեծում էին, և միաժամանակ պարենմթերքը պակասում էր, նահանջեց»: 0,25 մ.
14. Ո՞ր թվականին մահացավ Սյունիքի թագավոր Վասակը: 0,25 մ.
15. Ո՞ւմ հետ է Շուշիում հանդիպել Հ. Էմինը: 0,25 մ.
16. Որքա՞ն էր Փոքր Ղարաքիլիսա գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ռուսական զորքերի թիվը: 0,25 մ.
17. Ե՞րբ է ստեղծվել Արևելյան Հայաստանի տարածքում սոցիալ-դեմոկրատական առաջին խմբակը: 0,25 մ.
18. Ո՞վ էր հրատարակում «Կռունկ հայոց աշխարհին» պարբերականը: 0,25 մ.
19. Ո՞ր թվականին գործարկվեց Լենինականի հէկը: 0,25 մ.
20. Ե՞րբ (նշել տարին և ամիսը) է հիմնադրվել Եվրասիական տնտեսական միությունը: 0,25 մ.
21. Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ.

1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)

ա/ ՀՀ խորհրդարանը հավանության արժանացրեց միացյալ Հայաստանի գաղափարը:
բ/ Կիլիկիայում անգլիական զորքերին փոխարինեցին ֆրանսիական զորամասերը:
գ/ Երևանում սկսվեց Արևմտահայերի 2-րդ համագումարը:
դ/ Պողոս Նուբարի նախաձեռնությամբ Փարիզում սկսվեց Հայոց ազգային համագումարը:
ե/ Հայկական երկու պատվիրակությունները Փարիզում ստորագրեցին հայկական պահանջների համատեղ հուշագիր:
զ/ Շարուր-Նախիջևանը Հայաստանի Հանրապետությանը թողնելու մասին Դևին և Դրոն ստորագրեցին հրաման:
է/ Կազմակերպվեց պետական թանգարան (ներկայիս Հայաստանի պատմության թանգարանը):

1	2	3	4	5	6	7

22. Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ.

1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)

ա/ Հայաստանը դարձավ Միավորված ազգերի կազմակերպության անդամ:

բ/ Հանրապետության նախարարների խորհուրդը հաստատեց «ՀՀ երկրապահ զինապարտի ժամանակավոր կանոնակարգը»:

գ/ Պաշտպանության նախարարությունը «Զինապարտության մասին» օրենքով հիմք դրեց բանակը ժամկետային զինծառայողներով համալրելու ավանդույթին:

դ/ Խորհրդարանն ընդունեց օրենք, որով հանրապետությունում ստեղծվում էր բազմակուսակցական համակարգ:

ե/ Կուսակցությունների վերաբերյալ օրենքը խախտելու ամբաստանությամբ կասեցվեց Դաշնակցության գործունեությունը Հայաստանում:

զ/ ՀՀ անկախությունը ճանաչեց նորանկախ Լիտվայի Հանրապետությունը:

է/ ԼՂՀ ԻՊՈՒ ստորաբաժանումները ազատագրեցին Կուբաթլիի շրջանը:

1	2	3	4	5	6	7

23. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)

1.Աղաբաբյան դպրոց 2. Լազարյան ճեմարան

3. Ներսիսյան դպրոց 4. Մարդասիրաց ճեմարան

5. Շուշիի թեմական դպրոց 6. Երևանի թեմական դպրոց

ա. 1824 թ. բ. 1821 թ. գ. 1810 թ.

դ. 1815 թ. ե. 1837 թ. զ. 1838 թ.

1	2	3	4	5	6

24. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1 մ. (4 X 0,25 մ.)

1. «Բազմավեպ» 2. «Ազգասեր» 3. «Լրո Գիր» 4. «Արարատ»

ա. Թիֆլիս բ. Վենետիկ գ. Կալկաթա դ. Կ. Պոլիս

1	2	3	4

25. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ Պողոս Արապյանը Հերակլ II թագավորի հրավերով ժամանեց Վրաստան և 1775-1784 թթ. Թիֆլիսում իրականացրեց վրաց տպարանի վերակառուցման, նոր տպատառեր ստեղծելու ու տեղացի աշակերտներ պատրաստելու գործը:

բ/ XX դ. սկզբին Արևելյան Հայաստանում բանվորների թվաքանակը կազմում էր 40-42 հազար մարդ:

գ/ Արտաշեսը օժանդակեց Մարաստանի սատրապ Տիմարքոսի հակասելևկյան ապստամբությանը (Ք.ա. 162-160 թթ.), որը զգալիորեն թուլացրեց Սելևկյան տերության հիմքերը:

դ/ Պարթևական զորքերը թագաժառանգ Բակուրի հրամանատարությամբ հռոմեացիներին դուրս մղեցին Ասորիքից, Փյունիկիայից, Բյութանիայից և Կիլիկիայից:

ե/ Արտաշատ-Սատաղ մեծ և բարեկարգ ճանապարհի վրա էին Դվինը, Երվանդաշատը, Կարինը:

զ/ Հայաստանի ազատագրության Հարավային ծրագրի համաձայն Հայաստանում 6 տարի ժամկետով անհրաժեշտ էր համարվում տեղակայել 20-հազարանոց ռուսական զորք:
է/ 1947-1951 թթ. ԱՄՆ տեղափոխվեցին շուրջ 4,5 հազար հայեր, հիմնականում հայ ռազմագերիներ՝ ԽՍՀՄ նախկին քաղաքացիներ, որոնք հայրենիք վերադառնալով, կհայտնվեին ստալինյան ճամբարներում:
ը/ 1919 թ. մայիսին ԱՄՆ-ից ստացվեց 1,3 մլն փութ ալյուր, 457 հազար փութ ցորեն և այլ պարենմթերք:
թ/ Հայոց ցեղասպանության հիմնահարցը 1985 թ. սկսեց քննարկվել Եվրախորհրդարանում:

1	2	3

26. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
ա/ Ք.ա. VI հազարամյակում կային զարգացած վաղ երկրագործական հասարակություններ, ինչի մասին են վկայում Առատաշեն և Ադաբլուր (հայտնի է նաև Լճակ բլուր անունով) հնավայրերի պեղումները:
բ/ 1874 թ. օրենքով Երևանի նահանգը տրոհվեց յոթ՝ Երևանի, Էջմիածնի Սուրմալուի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Շարուր-Նախիջևանի և Դարալագյազի գավառների:
գ/ Փարիզի հաշտության կնքման նախօրյակին՝ 1856 թ. ապրիլին, Բարձր դուռը հրապարակեց բարեփոխումների նոր հրովարտակ, որը սին խոստումներից բացի ոչինչ չտվեց:
դ/ 1888 թ. գարնանը «Հնչակ» թերթում հրատարակվում է կուսակցության ծրագիրը:
ե/ 1930 թ. ապրիլի դրությամբ որպես «կուլակ» ունեզրկվել էր շուրջ 1700 տնտեսություն:
զ/ 1924 թ. փետրվարին կազմակերպվեց դաշնակցության երիտասարդական միության «ինքնավերացման» համագումարը:
է/ Ա. Մյասնիկյանը 1922 թ. մայիսի 10-ին հայ ժողովրդի անունից շնորհակալական բաց նամակ ուղղեց ԱՄՆ նախագահ Ու. Հարդինգին:
ը/ 1985 թ. ՀԽՍՀ ժողովրդական տնտեսությունում զբաղվածների մեջ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողների տեսակարար կշիռը հասավ 25 %-ի:

1	2	3

27. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
ա/ Երբ XIII դարի վերջին մոնղոլներն ընդունեցին իսլամը, սկսվեցին նաև կրոնական հալածանքները:
բ/ Հայոց կաթողիկոսի նստավայրը մնաց Հռոմկլայում մինչև 1292 թ.:
գ/ 1804 թ. սկզբում Վրաստանում տեղակայված ռուսական զորքերը գրավեցին Գանձակը (Գյանջա):
դ/ 1899 թ. գործարկվեց Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Ախալցխա երկաթուղին:
ե/ 1918 թ. մայիսի սկզբի դրությամբ՝ Կովկասյան ճակատում ռուսական զորքին փոխարինած հայկական զորքի թիվը հասնում էր 42-43 հազարի: Դրանցից Առանձին հայկական կորպուսի կազմում էր մոտ 25 հազարը, Բաքվի կոմունայի զորքերի կազմում՝ 15 հազարը, իսկ 2-3 հազարը՝ Իրանի տարածքում:
զ/ 1965 թ. հայերը կազմում էին Հայկական ԽՍՀ բնակչության 85 %-ը:
է/ Վեհիբ փաշան 1918 թ. մայիսի 29-ին՝ Բաթումում հայկական պատվիրակության հետ հանդիպման ժամանակ, խոստովանեց. «Դա հազվագյուտ մարտ էր այս պատերազմի պատմության մեջ... Հայերը Ղարաքիլիսայի մարտով ցույց տվեցին, որ իրենք կարող են լինել աշխարհի լավագույն զինվորները»:

ը/ 1918 թ. հուլիսի 22-26-ին Շուշիում կայացած արցախահայության առաջին համագումարը երկրամասը հռչակեց անկախ վարչաքաղաքական միավոր և կազմեց «Ղարաբաղի ժողովրդական կառավարություն»:
թ/ Մինչև 1923 թ. սկիզբը Կիլիկիայից հեռացան նաև շուրջ 6000 ուրֆահայեր:

1	2	3

28. Գտե՛ք, առանձին գրե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (2 X 0,5 մ.)
«1882 թ. դեկտեմբերի վերջերին թուրքական ոստիկանությունը հայտնաբերում է «Պաշտպան հայրենյաց» միությունը, բանտարկում շուրջ 70 մարդու: Հաջորդ տարվա ապրիլին Կարինում տեղի է ունենում դատավարություն, որին անձամբ հետևում էր Համիդ II-ը»:

29. Գտե՛ք, առանձին գրե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (2 X 0,5 մ.)
«Սարդարապատի ճակատամարտը, որը տևել է մայիսի 22-ից մինչև 28-ը, ավարտվեց հայկական զորքի փայլուն հաղթանակով: Թշնամին կորցրեց 3500 սպանված և նահանջեց մոտ 50 կմ՝ խուճապահար անցնելով Ախուրյանի արևմտյան ափը»:

30. Կարդացե՛ք և պատասխանե՛ք հարցերին. 0,5 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
«Նա հավատարիմ պահապան էր արդարադատության և իր կենցաղավարության մեջ զուսպ էր, նաև չափավոր ու ողջամիտ էր, ինչպես լավագույնները՝ հույների և հռոմեացիների մեջ»:
ա. Ո՞վ է այս տողերի հեղինակը:
բ. Ո՞ր թագավորի մասին է խոսքը:

31. Կարդացե՛ք և պատասխանե՛ք հարցերին. 0,5 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
«Պարսից գնդերը պարտություն կրեցին, փախուստի դիմեցին և ցրվեցան, սփռվեցին դաշտերում, լեռների կատարներում, խորերում և ձորերում»:
ա. Ո՞վ է այս տողերի հեղինակը:
բ. Ո՞ր ճակատամարտի մասին է խոսքը:

32. Կարդացե՛ք և պատասխանե՛ք հարցերին. 0,5 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
«*Շարունակել բանակցությունները Հայաստանի կառավարության հետ և չստանձնել ռուսական զորքերի օգնությամբ անմիջապես խորհրդայնացնելու նախառեռությունը*»:
ա. Ո՞ր կառույցն է ընդունել այս որոշումը:
բ. Ե՞րբ է այն ընդունվել (նշել տարին, ամիսը, ամսաթիվը):

Շարադրանք (2,5 միավոր)

Թեմա՝ «*Ներկուսակցական պայքարը, անհատի պաշտամունքի ձևավորումը, քաղաքական բռնաճնշումները»:* 2,5 միավոր (քայլը 0,5 մ)

<u>Առաջադրանքների պատասխաններ</u>
(17,5 միավոր)

1. Պոլիբիոս — 0,25 մ.
2. 25 կմ — 0,25 մ.
3. Հռադամիզդ — 0,25 մ.
4. Շրեշ — 0,25 մ.
5. Սևերոս — 0,25 մ.
6. 9 մ — 0,25 մ.
7. 22 — 0,25 մ.
8. 333-341 թթ. — 0,25 մ.
9. Փիլոստրատոս — 0,25 մ.
10. 1856 թ. — 0,25 մ.
11. 12 հազար — 0,25 մ.
12. Լվով — 0,25 մ.
13. Դիոն Կասիոս — 0,25 մ.
14. 1040 թ. — 0,25 մ
15. Իբրահիմ խան — 0,25 մ
16. 7 հազար — 0,25 մ
17. 1899 թ. — 0,25 մ
18. Մարկոս Աղաբեկյան — 0,25 մ
19. 1928 թ. — 0,25 մ
20. 2014 թ. մայիս — 0,25 մ
21. Ժամանակագրական ճիշտ հաջորդականություն — 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)

1	2	3	4	5	6	7
գ	ե	դ	ա	զ	է	բ

22. Ժամանակագրական ճիշտ հաջորդականություն — 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)

1	2	3	4	5	6	7
դ	բ	զ	ա	գ	է	ե

23. Համապատասխանեցում — 1,5 մ. (յուրաքանչյուրը՝ 0,25 մ.)

1	2	3	4	5	6
գ	դ	ա	բ	զ	ե

24. Համապատասխանեցում — 1 մ. (յուրաքանչյուրը՝ 0,25 մ.)

1	2	3	4
բ	գ	դ	ա

25. 2 ճիշտ պնդումներ — 1,5 մ. (յուրաքանչյուրը՝ 0,5 մ.)

1	2	3
գ	ե	է

26. 2 ճիշտ պնդումներ — 1,5 մ. (յուրաքանչյուրը՝ 0,5 մ.)

1	2	3
զ	է	ը

27. 3 սխալ պնդումներ — 1,5 մ. (յուրաքանչյուրը՝ 0,5 մ.)

1	2	3
դ	զ	է

28. Սխալի ուղղում. գրված է **դեկտեմբերի**, պետք է լինի՝ **նոյեմբերի**: — 1 մ. (յուրաքանչյուրը՝ 0,5 մ.)
29. Սխալի ուղղում. գրված է **50**, պետք է լինի՝ **60**: — 1 մ. (յուրաքանչյուրը՝ 0,5 մ.)
30. ա. Արիանոս — 0,5 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
    բ. Սանատրուկ
31. ա. Փավստոս Բուզանդ — 0,5 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
    բ. Ձիրավի ճակատամարտ
32. ա. ՌԿ(բ)Կ կենտկոմի քաղբյուրո — 0,5 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)